Հայաստանի Հանրապետությունում տնտեսական իրավիճակով պայմանավորված երկրի սոցիալ- տնտեսական ոլորտում առաջացնում են բազմաթիվ լուրջ խնդիրներ, որոնք պահանջում էին միանգամայն տարբեր մոտեցումներ գործընթացների կառավարման և կարգավորման նկատմամբ: Այսօր խիստ կարևորվում է կառավարման, շուկայագիտության, հաշվապահական հաշվառման գրագետ մասնագետների պատրաստումը որպես գործարարության, պետական, տեղական ինքնակառավարման, սոցիալական և այլ ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացման միջոց: Արձագանքելով արտաքին միջավայրի պահանջներին և կարևորելով այս հանգամանքը մեր բուհում 2009-2010 ուստարվանից բացվեց «Կառավարում /ըստ ոլորտի/» և 2016-2017 ուստարվանից «Շուկայագիտություն (մարքեթինգ ըստ ոլորտի)» և «Հաշվապահական հաշվառում և հարկում /ձեռնարկությունների/» մասնագիտությունները:

Բուհ-երում նոր մասնագիտությունների ներդրման և գոյատևման անհրաժեշտությունն ու իմաստն արտահայտվում է արտաքին միջավայրի և ներքին ռեսուրսների վերլուծության հիման վրա սահմանված առաքելությամբ:

Մեր **առաքելությունն** է. Շիրակի մարզում տնտեսագիտության, մենեջմենթի և գործարարության գիտելիքների տարածումը և տնտեսության տարբեր ոլորտներում ֆունկցիոնալ, կազմակերպական և սոցիալ-աշխատանքային գործընթացներն արդյունավետ կառավարելու ունակ մենեջերների, հաշվապահների և շուկայագետների պատրաստումը:

Առաքելությամբ պայմանավորված են այն նպատակները, որոնք հետապնդում է ամբիոնը.

- Կառավարման, շուկայագիտություն, հաշվապահական հաշվառման մրցունակ մասնագետների պատրաստում,
- Շիրակի մարզում հասարակության տնտեսագիտական գրագիտության բարձրացում:

Նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է լուծել կարևորագույն հետևյալ խնդիրը՝ **Շիրակի մարզում տնտեսագետ մասնագետների պատրաստման շուկայում որոշակի սեգմենտի նվաճում**, ինչին կարելի է հասնել մրցակից կրթական հաստատությունների կողմից առաջարկվող ծառայություններից շահեկանորեն տարբերվող կրթական ծառայություն առաջարկելով: Սա պահանջում է միջոցների ու միջոցառումների համակարգի առկայություն, որը վերաբերում է ինչպես մարդկային ռեսուրսներին՝ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորմանն ու զարգացմանը, այնպես էլ մասնագիտական պիտանելիության չափանիշներ, ծանրաբեռնվածության նկատմամբ քաղաքականություն, գիտամեթոդական աշխատանքների կատարման, դասավանդման կիրառվող մեթոդների նկատմամբ պահանջներ և այլն, այնպես էլ նյութական ռեսուրսներին:

Թեև այս տարիներին ամբիոնում բավարար մակարդակով իրականացվել են դասախոսի ծանրաբեռնվածության բաղադրիչներ կազմող ուսումնական, ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքները, այնուամենայնիվ ամբիոնի աշխատանքների կազմակերպումն ավելի արդյունավետ դարձնելու և բուհ դիմորդների ու ընդունվողների թիվն ավելացնելու նպատակով առաջարկում ենք միջոցների ու միջոցառումների հետևյալ համախումբը, որը մեր կարծիքով կհանգեցնի ցանկալի արդյունքների.

1. միատեսակ մասնագիտությամբ շրջանավարտների ներգրավում և հետբուհական կրթության խրախուսում:

2. **արդիականացնել ուսումնական պրոցեսը կրթության ոչ ֆորմալ մեթոդների կիրառմամբ**, որոնք նպաստում են դասերի հանդեպ հետաքրքրության և նյութի յուրացման արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես
- ուսանողների մասնակցությամբ բանավեճերի, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում,
 - տարբեր կազմակերպությունների ղեկավարների և մասնագետների հետ հանդիպումների կազմակերպում իրենց գործունեության, հաջողված կամ նույնիսկ անհաջող փորձերի մասին ներկայացնելու նպատակով, նրանց հրավիրում դասախոսություններ կարդալու :
3. **զարգացնել ներբուհական և արտաքին կապերը**, մասնավորապես
- Ակտիվ և գործուն համագործակցության հաստատում Շիրակի մարզի և Ջավախքի տարածաշրջանի դպրոցների հետ /պարտադիր այցելություններ, ընդ որում ոչ մեկ անգամյա և անպայմանորեն ճիշտ ընտրված ժամանակահատվածներում, որոնց ընթացքում կներկայացվեն մասնագիտությունների նկարագրերը, ցանկալի է նաև լիֆլեթների կամ բուկլետների տրամադրմամբ, ընձեռած հնարավորությունները, բաց դասերի կազմակերպում այդ դպրոցների աշակերտների ներկայության ապահովմամբ / ի դեպ այդպիսի փորձ ամբիոնն ունի, մեր երիտասարդ բոլոր դասախոսներն անց են կացրել այդպիսի ուսանելի դասեր, մրցույթ օլիմպիադաների կազմակերպում:
 - Համագործակցության հաստատում հայկական և արտասահմանյան բուհերի հետ:
 - Կարիերայի կենտրոնի հետ համագործակցության հաստատում և զարգացում / լավագույն ուսանողներին երաշխավորագրերի տրամադրում/:
 - Բուհի և այլ հեռուստաընկերությունների հետ համագործակցության ապահովում:
 - Միջազգային կրթական և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն. մասնավորապես դրամաշնորհային ծրագրերի ներկայացում / այսպիսի փորձ ամբիոնն ունի՝ երկու անգամ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի տնտեսագիտական կրթության ազգային խորհրդի ֆինանսավորմամբ իրականացվել են տնտեսագիտության դասավանդման մեթոդների վերաբերյալ ծրագրեր, որին մասնակցել են ինչպես մեր համալսարանի, այնպես էլ այլ բուհերի և հանրակրթական դպրոցների ուսուցիչներ :
4. **տրամադրել լրացուցիչ ծառայություններ՝** մեծ պահանջարկ ունեցող որոշ նեղ մասնագիտական դասընթացների կազմակերպում /օրինակ հաշվապահության, մարքեթինգի, գովազդի կառավարման, հաղորդակցման կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարում և այլն/, որոնք մեր բաժնի ուսանողների համար կլինեն անվճար և գրավիչ կդարձնեն մեզ մոտ սովորելը:
5. **Նոր մասնագիտությունների առումով** նպատակահարմար ենք գտնում բակալավրում «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Ֆինանսական մենեջմենթ», «Մաքսային գործ» և մագիստրատուրայում «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Շուկայագիտություն», «Ընդհանուր և ռազմավարական

կառավարում» կրթական ծրագրերի ներդրումը, ինչպես նաև տնտեսագիտական այլ մասնագիտությունների ներդրում/ ցանկը բնականաբար ենթակա է ավելի հանգամանալից քննարկման/: Սրանով կլուծենք մի քանի խնդիր. նախ ամբիոնի դասախոսները կունենան նեղ մասնագիտացում, որից դասավանդման արդյունավետությունը բնականաբար կբարձրանա, երկրորդ բուհ դիմած ուսանողը կունենա ընտրության հնարավորություն:

Ամբիոնի հեղինակության բարձրացման և դիմորդների ներգրավման նպատակով նախատեսվում է հաջորդ ուսումնական տարում կատարել հետևյալ ոչ լսարանային աշխատանքները, որոնցից մի քանիսն արդեն մշակման փուլում են.

- Օրինակ` Facebook սոցիալական ցանցում կարող է ստեղծվել տնտեսագետների համար նախատեսված բաց խումբ, որում կբարձրացվեն տնտեսագիտական ակտուալ խնդիրներ, կհրավիրվեն բանավեճեր, կտեղադրվեն տնտեսագիտական բովանդակությամբ լուսանկարներ, տեսանյութեր, դասընթացների հայտարարություններ և այլն:
- Ինտերնետ կայքի ստեղծում FB հետադարձ կապի ապահովում:
- ՇՊՀ-ի տնտեսագետ-դասախոսների ջանքերով ստեղծել տարբեր թեմաներով ցուցադրություններ (PPP ֆորմատով) ու տեղադրել համացանցում:
- Ստեղծել Շիրակի մարզում պահանջարկ ունեցող որևէ տնտեսագիտական դասընթացի էլեկտրոնային տարբերակը և իրականացնել հեռավար ուսուցում:
- Ստեղծել տնտեսագետ-ուսանողների նախաձեռնությամբ տնտեսագիտական էլեկտրոնային ամսաթերթ ու այն տարածել շահակիցներին:
- Կազմակերպել օլիմպիադաներ տնտեսագիտական խաղ - մրցույթների տեսքով ինչպես ավագ դպրոցների աշակերտների, այնպես էլ ուսանողների շրջանում:

Հարկ էմ համարում նշել նաև, որ ամբիոնը, բացի ուսումնակրթական նպատակներից, խնդիր է դնում ուսանողների մոտ զարգացնել կրեատիվ մտածողությունը և բարձրացնել նրանց մոտ մեր իրականության հիմնախնդիրների և նրանց լուծման նկատմամբ ուշադրությունն ու հոգածությունը:

Հարկ է փաստել, որ որոշ առարկաների ուղղությամբ դասագրքեր ընդհանրապես չկան: Ցանկալի կլիներ համալսարանը բաժանորդագրվի տնտեսագիտական որոշ պարբերականների և գիտական հանդեսների:

Ամբիոնի դասախոսները դասախոսությունները կարդում և գործնական աշխատանքներ են անցկացնում ինչպես տրադիցիոն եղանակով, այնպես էլ` ոչ տրադիցիոն` կիրառելով դասավանդման ժամանակակից միջոցներ:

«Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ» ամբիոնի գործունեությունը հաշվետու 2021-2022 ուստարում միտված է եղել ուսումնական ու գիտական աշխատանքների պատշաճ իրականացմանը:

Ամբիոնի ՊԴ կազմի թվաքանակը հաշվետու 2021-2022 ուստարում կազմել է 29:
 2021-2022 ուստարում ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է $136/29=4.69$

Անհրաժեշտ է փաստել, որ SS ուղղությամբ ամբիոնը ՊԴ կազմի հետ կապված խնդիր ունի. 15 դասընթաց իրականացվում է ամբիոնի մի մասնագետի կողմից, ինչը մտահոգիչ է:

ԱՄԲԻՈՆԻ ՊԴ ԿԱԶՄԸ 2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ, ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

- Գիտությունների դոկտոր՝ 3
- Գիտությունների թեկնածու՝ 16
- Առանց գիտական աստիճանի՝ 10


ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

- ԳԱԱ թղթակից անդամ՝ 1
- Պրոֆեսոր՝ 3
- Դոցենտ՝ 11
- Առանց գիտական կոչման՝ 15

ԸՍՏ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ


- Իգական՝ 10
- Արական՝ 19

ԱՄԲԻՈՆԻ ՊԴ ԿԱԶՄԸ 2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ



Ամբիոնի ՊԴ կազմի 7 ներկայացուցիչներ 2021-2022 ուստարում անցել են ոչ մասնագիտական վերապատրաստումներ: Ստորև ներկայացված են վերջին 5 տարիների ընթացքում ամբիոնի ցուցանիշները՝ կապված ՊԴ կազմի անցած մասնագիտական և ոչ մասնագիտական վերապատրաստումների հետ:

ԱՄԲԻՈՆԻ ՊԴ ԿԱԶՄԻ ԱՆՑԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Ներկայացված արդյունքները գոհացուցիչ չեն հատկապես մասնագիտական վերապատրաստումների տեսանկյունից, ինչը նկատելի է նաև համալսարանի մյուս ամբիոններում:

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուստարում ամբիոնում իրականացվել են հետևյալ կրթական ծրագրերը.

Բակալավրի կրթական աստիճանի առկա համակարգ՝

- Մաթեմատիկա

- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Բակալավրի կրթական աստիճանի հեռակա համակարգ՝

- Ինֆորմատիկա
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Մագիստրոսի կրթական աստիճան՝

- Մաթեմատիկա
- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

Հետազոտողի կրթական աստիճան (ասպիրանտուրա, հայցորդություն)

- Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ բնագավառի մասնագիտություններ (Ա.00.00)
- Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա) (ԺԳ.00.02)

Վերոնշյալ կրթական ծրագրերի մասնագրերում ներառված առարկայական նկարագրիչներին համապատասխան 2021-2022 ուստարվա ընթացքում ՊԴ կազմի կողմից մշակվել և լրամշակվել են բոլոր դասընթացների թեմատիկ օրացուցային պլանները, միջանկյալ և ամփոփչ ստուգումների հարցաշարերը, հարցատոմսերը:

2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԱՄԲՈՆՈՒՄ ԱՌԿԱ ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, (ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ)	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՔԱՆԱԿ						
	ԸՆԴԱՄԵՆԸ	ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ	ԼՍԱՐԱՆԱՅԻՆ	ՈՐԻՑ			
				ԴԱՍՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	ԳՈՐԾՆԱԿԱՆ	ԼԱԲՈՐԱՏՈՐ	ՍԵՄԵՆԱՐ
Բակալավր (առկա)	7091	1036	5991	2232	2224	1489	78
Բակալավր (հեռակա)	2849	1229	1628	686	1329	262	25
Մագիստրատուրա	5036	2460	2772	970	562	938	106
Ասպիրանտուրա	-	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	14976	4725	10391	3888	4115	2689	209

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածության 69%-ը լսարանային ժամաքանակն է, իսկ 31%-ը՝ արտալսարանային: Արտալսարանային ծանրաբեռնվածության մեջ մտնում են մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների, պրակտիկաների ղեկավարումը, հեռակա բաժնի ուսանողների անհատական խորհրդատվությունները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, հարցատոմսերի կազմումը, քննությունների անցկացումը և ստուգումը:

Նշենք, որ հաշվետու ուստարում ամբիոնի ՊԴ կազմի կողմից ըստ կարգի ղեկավարվել են յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը:

Նշենք, որ 2021-2022 ուստարում ամփոփիչ ատեստավորմանը չեն մասնակցել թվով 2 ուսանողներ՝ բակալավրի կրթական ծրագրի հեռակա համակարգի Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտության 5-րդ կուրսի ուսանող Ս. Մուրադյանը և մագիստրատուրա կրթական ծրագրի Մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Ս. Խոջանյանը:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուստարում ամբիոնի ՊԴ կազմի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ամփոփված են 48 գիտական հոդվածներում և 1թեզիսում:


ԱՄԲԻՈՆԻ ՊԴ ԿԱԶՄԻ՝ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ	ՊԴ ԿԱԶՄ	ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ / ՊԴ ԿԱԶՄ
49	29	1,7

Ինչպես տեսնում ենք, մեկ դասախոսին ընկնող գիտական աշխատությունների ցուցանիշը 1-ից փոքր չէ:


ԱՄԲԻՈՆԻ ՊԴ ԿԱԶՄԻ՝ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ

Միջազգային վարկանիշավորում ունեցող կամ Scopus կամ Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրում հոդված	ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	ՀՀ ԲՈ Կ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում հոդված	РНИИՀ համակարգում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	Միջազգային գրախոսվող ամսագրում հոդված	Գրախոսվող նեղ մասնագիտական ամսագրում	Միջազգային գիտաժողովի ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի ժողովածուում թեզիս	Հանրապետական գիտաժողովի ժողովածուում հոդված	Հանրապետական գիտաժողովի ժողովածուում թեզիս	Ուսումնասիրողական աշխ.	Գիտական մենագրություն	Այլ	Ընդամենը
10	4	16	9	1	1	2	3	1	0	0	0	0	2	49



Ինչպես կարող ենք տեսնել, միջազգային վարկանիշավորում ունեցող կամ Scopus, Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրերում հոդվածների քանակը 10 է, ինչը բավական բարձր ցուցանիշ է: Նման ցուցանիշ ապահովվել է ամբիոնի պրոֆեսորներ Ս. Սարգսյանի, Հ. Դրմեյանի, դոցենտներ Վ. Մանուկյանի, Հ. Նիկողոսյանի, Ա. Սարգսյանի ծավալած գիտական գործունեության արդյունքում:

ԱՄԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Հարկ էնք համարում նշել, որ այս տեսանկյունից ամբիոնը առաջատարն է համալսարանում: Չնայած այդ հանգամանքին՝ օտարերկրյա գործընկերների հետ համատեղ տպագրված աշխատանքները քիչ են, մասնավորապես, 2021-2022 ուստարում նման հոդվածների թիվը 2 է՝ պրոֆեսոր Հ. Դրմեյանի և դոցենտ Ա. Սարգսյանի՝ օտարերկրյա գործընկերների հետ համահեղինակությամբ հոդվածները:

2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՄԲԻՈՆԻ ՊԴ ԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿ

ՊԴ ԿԱԶՄԻ ՔԱՆԱԿ	ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՊԴ ԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՊԴ ԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՇՎԵԿԵԻՈՐ %
29	19	66%

Ինչպես տեսնում ենք, այս տեսանկյունից արդյունքները գոհացնող չեն, քանի որ գիտական աշխատանքները հիմնականում տպագրվում են նույն անձանց կողմից: Այս խնդրին լուծում տալու, և, առհասարակ, գիտական գործունեությամբ զբաղվելու համար համալսարանի աշխատակիցներին խթանելու նպատակով դեռ 2012թ.-ին մշակվել և ներդրվել է աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը, որից ելնելով, ըստ ընթացակարգում

սահմանված վարկանիշային սանդղակի, աշխատակիցների կողմից հրատարակված աշխատանքների դիմաց համալսարանը հատկացնում է սահմանված որոշակի գումար՝ հավելավճար: Մասնավորապես, վերջին 5 տարիների ընթացքում ամբիոնի աշխատակիցներին տրամադրված հավելավճարն այսպիսինն է.

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ /ՀՀ ԴՐԱՄ/				
2017 թ.	2018 թ.	2019թ.	2020թ.	2021թ.
911.550	983.100	1.244.850	1.244.350	823.600

Հարկ ենք համարում նշել, որ այս տեսանկյունից ևս ամբիոնն առաջատարն է համալսարանում:

Համալսարանի աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների կողմից ծավալած գիտական գործունեության խթանման նպատակով 2016թ.-ին համալսարանը ձեռնարկեց և մի քայլ. մշակվեց և ներդրվեց գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգը: Այս շրջանակում 2016-2022թթ.-ի ընթացքում ամբիոնի աշխատակիցների և թողարկվող մասնագիտությունների ուսանողների մասնակցությամբ իրականացվել են ներքոնշյալ 4 թեմաները: Ինչպես կարող ենք տեսնել տարբեր կրթական աստիճանի ուսանողներ կարողացել են մասնակցել դրամաշնորհին՝ ձեռք բերելով հետազոտական կարողություններ և հմտություններ. մասնավորապես, նշված թեմաների իրականացման շրջանակում ուսանողների համահեղինակությամբ տպագրված հոդվածների թիվը կազմում է 2:

ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՄԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

№	ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ	ԹԵՄԱ	ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ
1	2017թ. -2019թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ֆիզիկայի խնդիրների լուծման ներկայացումը շարժուն տեսապատկերներով	Մերոբյան Երվանդ (ղեկ.) Մանուկյան Վարդան Սուլթանյան Խաչատուր Խալիֆյան Լիլիթ (ուսանող)
2	2018թ. -2020թ.	Ցուցադրական փորձերի և լաբորատոր աշխատանքների իրականացումը ֆիզիկայի դպրոցական դասընթացում	Դրմեյան Հենրիկ (ղեկ.) Նազարյան Նունե Մելքոնյան Արմեն Երիցյան Քնարիկ (ուսանող)
3	2020թ.-2022թ.	Ֆիզիկական և մաթեմատիկական ընտրովի խնդիրների իրացման բազմամակարդակային մոտեցումն որպես կրթական գործընթացի որակի բարձրացման միջոց	Մանուկյան Վարդան (ղեկ.) Նիկողոսյան Գագիկ Դրմեյան Հենրիկ Սարուխանյան Ալվարդ (ուսանող)
4	2022թ.-2024թ.	Մաթեմատիկական և ֆիզիկական տրամաբանական, որակական, դիվերգենտ խնդիրները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց	Մանուկյան Վարդան (ղեկ.) Նիկողոսյան Գագիկ Սարգսյան Սամվել (խորհրդատու) Շահբազյան Անի (ուսանող)

Բոլոր թեմաների ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունները տեղադրված են համալսարանի պաշտոնական կայքում:

Նշենք, որ ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչները միշտ ակտիվորեն ընդգրկված են եղել նաև ՀՀ Գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհներում: Ստորև ներկայացված են համապատասխան տվյալներ վերջին 5 տարիների համար:

ԱՄԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ՝ ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

N	ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ	ԹԵՄԱ	ԱՆԴԱՄՆԵՐ
1.	2017	Նանտ և միկրոտեխնիկական նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմներ (բազային)	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ
2.	2018	Նանտ և միկրոտեխնիկական նյութերի և կառուցվածքների մեխանիկական պրոբլեմների լաբորատորիայի պահպանում (բազային)	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ
3.	2019	Նանտ և միկրոտեխնիկական նյութերի և կառուցվածքների մեխանիկական պրոբլեմների լաբորատորիայի պահպանում (բազային)	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ
4.	2018-2020	Ասիմետրիկ շերտավոր ամրավորումներ պարունակող պոլիմերային նանոկառուցվածքների առաձգական հատկությունների մոդելավորումը	Սարգսյան Արմենուհի Սարգսյան Սամվել Սարգսյան Լիլիթ Ժամակոչյան Քնարիկ
5.	2018-2020	Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների՝ ըստ կայունության հաշվարկման հիմունքներ	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ
6.	2018-2020	Նանտ ոչ չափական կիսահաղորդչային ենթակառուցվածքներում ընդհատ վիճակների և կոհերենտ ոչ ստացիոնար օպտիկական երևույթների ուսումնասիրության մի քանի հարցեր	Նիկողոսյան Հրաչիկ Հարությունյան Սաշա Մանուկյան Վարդան Մովսիսյան Անի
7.	2018-2020	Մաթեմատիկայի և ֆիզիկայի որոշ սկզբունքների կիրառումը հանրակրթության ոլորտում ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով	Սերոբյան Երվանդ Նիկողոսյան Գագիկ Մկրտչյան Գոհար Խալիֆյան Լիլիթ
8.	2020	Նանտ և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում (բազային)	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ
9.	2021	Նանտ և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում (բազային)	Սարգսյան Սամվել Սարգսյան Արմենուհի Ժամակոչյան Քնարիկ
10.	2021-2024	Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ձկուն սալեր և թաղանթներ	Սարգսյան Արմենուհի Սարգսյան Սամվել

			Ժամակոչյան Քնարիկ Խաչատրյան Մելինե
11.	2021-2024	Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց	Մանուկյան Վարդան Սերոբյան Երվանդ Նիկողոսյան Գագիկ Նազարյան Նունե

Այս տեսանկյունից ամբիոնը միակն է համալսարանում, որի աշխատակիցները իրականացնում են ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմաներ:

Նշենք նաև, որ Գիտության կոմիտեի կողմից ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի արդյունքներով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Սարգսյանը մշտապես ընդգրկվել է առավել բարձր արդյունավետությամբ աշխատող մինչև 100 գիտաշխատողների ցուցակում:

2021-2022 ուստարում ամբիոնի կողմից թողարկվող մասնագիտությունների ուղղությամբ ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 136:

**ՀԵՌԱՑՎԱԾ, ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ, ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ 2021-2022 ՈՒՍԱՐՈՒՄ՝
ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ**

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ /ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ/	ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ				
		Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարկետում ստացած	Բանակ գորակոչված
Բակալավր /առկա/	I					6
	II					
	III					
	IV					
ԸՆԴԱՄԵՆԸ						6
Բակալավր /հեռակա/	I					2
	II					
	III					
	IV					
	V	1			1	
ԸՆԴԱՄԵՆԸ		1			1	2
Մագիստրատուրա	I					
	II	1				
ԸՆԴԱՄԵՆԸ		1				
ԸՆԴԱՄԵՆԸ		2			1	8

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՂԻՍՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՑՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻՋԵՑՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	-	-	-	-	-	-	-
II	2	1	-	-	1	2	-
III	2	-	-	1	1	2	-
IV	3	-	-	-	3	2	1
ԸՆԴԱՄԵՆԸ	7	1	-	1	5	6	1

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՂԻՍՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՑՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻՋԵՑՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	9	3	6	-	-	8	1
II	11	1	4	1	5	11	-
ԸՆԴԱՄԵՆԸ	20	4	10	1	5	19	1

«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՂԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՅՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻԶԵՅՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	9	4	3	1	1	7	2
II	6	3	2	1	-	5	1
III	1	-	-	-	1	-	1
IV	6	3	1	1	1	1	5
ԸՆԴԱՄԵՆԸ	22	10	6	3	3	13	9

«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՂԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՅՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻԶԵՅՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	1	-	-	1	-	1	-
II	9	1	2	2	4	8	1
ԸՆԴԱՄԵՆԸ	10	1	2	3	4	9	1

**«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՅՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻՋԵՅՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	12	7	3	2	-	11	1
II	6	1	4	1	-	5	1
III	6	-	3	1	2	3	3
IV	-	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	24	8	10	4	2	19	5

**«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՌԱԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՅՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻՋԵՅՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	13	12	1	-	-	3	9
II	3	2	1	-	-	1	2
III	10	9	-	-	1	1	9
IV	3	3	-	-	-	3	-
V	7	5	-	2	-	2	5
ԸՆԴԱՄԵՆԸ	36	31	2	2	1	11	25

«ԻՆՏՈՐՄԱՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՌԱԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԻՄՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՐՍ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՍՈԳ				ՍՈԳ-Ը ԲԱՐՁՐԱՑՐԱԾ	ՍՈԳ-Ը ԻՋԵՑՐԱԾ
		40-70	71-85	86-90	91-100		
I	-	-	-	-	-	-	
II	-	-	-	-	-	-	
III	3	2	1	-	-	2	
IV	4	2	2	-	-	1	
V	9	9	-	-	-	8	
ԸՆԴԱՄԵՆԸ	16	13	3	-	-	11	

Ստորև ներկայացված են 2021-2022 ուստարում ամբիոնի թողարկած մասնագիտությունների ուղղությամբ շրջանավարտների և գերազանցության դիպլոմ ստացած ուսանողների քանակը՝ ըստ կրթական աստիճանի և ուսուցման ձևի:

Մագիստրատուրայի կրթական աստիճանում ուսանողների կեսից ավելին ստացել են գերազանցության դիպլոմ: Այս երևույթը նկատելի է ողջ համալսարանում և խորը վերլուծության կարիք ունի:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման անհրաժեշտություն՝ կապված որակավորումների ազգային շրջանակի, որակավորումների ոլորտային շրջանակի, աշխատաշուկայի մշտափոփոխ պահանջներին համապատասխան: ՏՏ ուղղությամբ համապատասխան որակավորումներով ՊԴ կազմի ներկայացուցիչների սակավություն: Մասնագիտական և ոչ մասնագիտական վերապատրաստումներին ՊԴ կազմի ներկայացուցիչների սակավ մասնակցություն: Հստակ գիտական ուղղվածությունների, այդ ուղղվածությունների շրջանակում առանձնացված թեմաների բացակայություն, որոնք հնարավոր է զարգացնել ամբիոնի ներուժի հիման վրա: ՊԴ կազմի ներկայացուցիչների նեղ շրջանակի ներգրավվածություն դրամաշնորհային ծրագրերում: Միջազգային վարկանիշավորմամբ օժտված, Scopus, Web of Science և այլ շտեմարաններում ընդգրկված ամսագրերում սակավ հոդվածների տպագրություն:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում որակավորումների ազգային շրջանակին, որակավորումների ոլորտային շրջանակին, աշխատաշուկայի մշտափոփոխ պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ՀՀ առաջատար բուհերի առաջավոր փորձը (բենչմարքինգ)

Դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների բարելավում:

Ուսանողների մասնագիտական և ընդհանրական գիտելիքները, կարողությունները, հմտությունները բարելավող լրացուցիչ դասընթացների և սեմինարների կազմակերպում՝ աշխատաշուկայի ներկայացուցիչների ներգրավմամբ: Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներով ՊԴ կազմի ապահովում: ՊԴ կազմի համար մասնագիտական և ընդհանրական (օտար լեզու, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն) վերապատրաստումների կազմակերպում ոլորտի առաջատար մասնագետների կողմից: Ամբիոնի գիտական ուղղվածությունների հստակեցում՝ գիտական ներուժին համապատասխան: ՊԴ կազմի համար գիտությամբ, հետազոտությամբ զբաղվելու, դրամաշնորհներին դիմելու, գիտական հոդվածներ գրելու և այլ հմտություններն ու կարողությունները զարգացնող դասընթացների և վերապատրաստումների կազմակերպում: Միջազգային վարկանիշավորմամբ օժտված, Scopus, Web of Science և այլ շտեմարաններում ընդգրկված ամսագրերում առավել շատ հոդվածների տպագրություն՝ նաև միջազգային գործընկերների հետ համահեղինակությամբ:

«Կենսաբանության և քիմիայի» ամբիոնի գործունեությունը հաշվետու 2021-2022 ուստարում միտված է եղել ուսումնական ու գիտական գործունեության իրականացմանը: Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնն իրականացրել է ուսումնական պլաններով և համապատասխան առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր դասախոսություն, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքները, կատարվել են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ՝ ըստ դասախոսների անհատական աշխատանքային պլաններում նշված ժամանակացույցի:

Ամբիոնը թողարկում է հետևյալ մասնագիտությունները.

Բակալավրի կրթական աստիճան՝

- Կենսաբանություն
- Դեղագործական քիմիա

Մագիստրոսի կրթական աստիճան՝

- Կենսաբանություն
- Կենսատեխնոլոգիա

ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ 2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՍԱԺԻ

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Գիտական կոչում	Ծննդ. տարեթիվ	Աշխ. Մտած (գիտամասնակավար ժական)
1	Ալեքսանյան	Սամվել	Սերգեյի	պրոֆեսոր, ամբիոնի վարիչի ԺՊ	Կ.գ.դ.	պրոֆեսոր	1946	40
2	Ավագյան	Կարինե	Խանանի	դոցենտ	Քիմ գ.թ.	դոցենտ	1963	26
3	Մելքոնյան	Լուսինե	Հրայրի	դոցենտ	Կենս գ.թ.	դոցենտ	1979	18
4	Խաչատրյան	Արմենուհի	Արմենակի	ասիստենտ	Քիմ գ.թ.	-	1981	19
5	Պետրոսյան	Լիլիթ	Հրահատի	դասախոս	-	-	1973	12
6	Խուրշուդյան	Ռուզաննա	Ղազարի	դասախոս	-	-	1973	11
7	Գրիգորյան	Անգին	Ֆելիքսի	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1970	25
8	Գրիգորյան	Անահիտ	Ֆաբրիցուսկու	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1956	30
9	Ադամյան	Նելլի	Վոլոդյայի	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1960	28
10	Օքսուզյան	Գայանե	Ռաֆիկի	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1970	23
11	Պետրոսյան	Կարինե	Ռահիմի	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1963	32
12	Ալեքսանյան	Աննա	Սամվելի	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1983	15
13	Խաչատրյան	Անուշ	Ստյոպայի	դոցենտ	Կ.գ.թ	դոցենտ	1968	27
14	Գրիգորյան	Կարինե	Աշիկի	ասիստենտ	Կ.գ.թ		1970	34
15	Գոլյան	Գոհար	Պերճի	դասախոս	-	-	1958	30
16	Ստեփանյան	Արթուր	Արմենակի	դոցենտ	Բ.գ.թ	դոցենտ	1966	30
17	Համբարյան	Հայկազ	Մամիկոնի	դասախոս	-	-	1984	13
18	Փանոսյան	Թերմինե	Ռոբերտի	լաբորանտ, ասիստենտ	Կ.գ.թ	-	1981	9
19	Հարությունյան	Արայիկ	Մանվելի	ասիստենտ	տեխ. գիտ թեկն.	-	1978	2
20	Մելիքյան	Վասպուրակա ն	Շահենի	ասիստենտ	գյուղ. գիտ թեկն.		1963	2

ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԹԻՎՆԻ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ, ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ

ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

- գիտությունների դոկտոր՝ 1
- գիտությունների թեկնածու՝ 15
- առանց գիտական աստիճանի՝ 4

ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

- պրոֆեսոր՝ 1
- դոցենտ՝ 10
- առանց գիտական կոչման՝ 9

ԸՍՏ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

- իգական՝ 15
- արական՝ 5

ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ԹԻՎԸ 2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Տարիքային սանդղակ	Թիվ	Տոկոս
25-30	-	-
31-40	2	10%
41-50	6	30%
51-60	8	40%
61-70	3	15%
71 և ավելին	1	5%

ԱՄԲՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ԲԱԶՄՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՄԱՆ

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Բազային կրթությունը	Որակավորումն ըստ բազային կրթության	Մասնագիտությունը հետբուհական կրթական համակարգում
1	Ավագյան Կարինե Խանանի	Իվանովոյի Պետական համալսարան	Քիմիկ, մանկավարժ	Բ.00.02 Անալիտիկ քիմիա Բ.00.03 Օրգանական քիմիա
2	Խաչատրյան Արմենուհի Արմենի	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Բ.00.03 Օրգանական քիմիա
3	Մելքոնյան Լուսինե Հրայրի	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Գ.00.04 Կենսաքիմիա
4	Պետրոսյան Լիլիթ Հրահատի	Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական ինստիտուտ	Դեղագործություն մասնագիտությամբ պրովիզոր որակավորմամբ	-
5	Խուրշուդյան Ռուզաննա Ղազարի	Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական ինստիտուտ	Դեղագործություն մասնագիտությամբ պրովիզոր որակավորմամբ	-
6	Գրիգորյան Անգին Ֆելիքսի	ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետ	Կենսաբան, կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Գ.00.08 Կենդանաբանություն
7	Ալեքսանյան Սամվել Սերգեյի	Երևանի անասնաբուժական- անասնաբուժական ինստիտուտ	զոոինժեներ	1.Գ.00.04 Կենսաքիմիա 2. Գ.00.04 Կենսաքիմիա
8	Գրիգորյան Անահիտ Ֆաբրիցուսկու	ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետ	Կենսաբան, կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Գ.00.09 Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա
9	Ադամյան Նելլի Վոլոդյայի	ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետ	Կենսաբան, կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Գ.00.08 Կենդանաբանություն
10	Օքսուզյան Գայանե Ռաֆիկի	Երևանի անասնաբուժական- անասնաբուժական ինստիտուտ	Չոռինժեներ	Գ.00.04 Կենսաքիմիա

11	Պետրոսյան Կարինե Ռահիմի	Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ	Զոոինժեներ	Գ.00.01 Ռադիոկենսաբանություն
12	Ալեքսանյան Աննա Մամվելի	ԳՊՄԻ-ի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետ	Կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Գ.00.04 Կենսաքիմիա
13	Խաչատրյան Անուշ Ստյոպայի	Մոսկվայի անտառտնտեսության ինստիտուտ	Անտառտնտեսության ինժեներ Մասնագիտացում՝ բնակավայրերի կանաչապատում	Գ.00.05 Բուսաբանություն
14	Գրիգորյան Կարինե Աշիկի	Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ	Միջնակարգ դպրոցի կենսաբանության ուսուցիչ	Գ.00.11 Էկոլոգիա
15	Գոլյան Գոհար Պերճի	ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետ	Կենսաֆիզիկ, կենսաբանության ուսուցիչ	-
16	Ստեփանյան Արթուր Արմենակի	Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական ինստիտուտ	Բուժական գործ	ԺԴ.00.04 Սրտաբանություն
17	Համբարյան Հայկազ Մամիկոնի	ԳՊՄԻ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, կինեզոլոգիա	Կինեզոլոգ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ	-
18	Փանոսյան Թերմինե Ռոբերտի	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	Կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Գ.00.04 Կենսաքիմիա
19	Հարությունյան Արայիկ Մանվելի	Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիա	Ինժեներ տեխնոլոգ	Ե.18.01 Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա
20	Մելիքյան Վասպուրական Շահենի	Բառնաուլի ագրարային համալսարան	Ագրոնոմ	Զ.01.01 Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, ագրոքիմիա

Ամբիոնում աշխատում է մեկ գործավար, ում որակավորման բազային կրթությունն է կենսաքիմիկոս, կենսաբանության ուսուցիչ և մեկ լաբորանտ՝ որի բազային կրթությունն է կենսաբանության, լրացուցիչ քիմիայի ուսուցիչ:

Ամբիոնն ունի **10,25 դրույք+653 ժամ** ծանրաբեռնվածություն, որն իրականացվում է 20 դասախոսների կողմից:

**ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ
2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	2021	2022	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Արմենուհի Խաչատրյան	բ.գ.թ.		29.03.2022 13.03.2022	2
2	Լիլիթ Պետրոսյան			29.07.2022 04.08.2022	2
3	Ռուզան Խուրշուդյան			15.06-25.07.2022	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	3			5

ԱՄԲԻՈՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) կառուցվածքային բաղադրիչներն են.

6. Մասնագիտության մասնագիր
7. Ուսումնական պլանի կառուցվածք
8. Ուսումնական պլան
9. Առարկայական նկարագրեր
10. ՄԿԾ-ի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիաների

1.3. Մասնագիտության մասնագիրը ներառում է ամբողջական տեղեկություն կրթական ծրագրի վերաբերյալ.

- Ծրագրի անվանումը
- Որակաորումների ազգային շրջանակի մակարդակը
- Մասնագիտությունը, աստիճանը և շնորհվող որակավորումը
- Կրեդիտների քանակը
- ՄԿԾ-ն իրականացնող բուհի, ֆակուլտետի, ամբիոնի անվանումները
- Ուսուցման լեզուն
- Լիցենզավորված/հավատարմագրված լինելը
- ՄԿԾ-ի մուտքի պայմանները
- Ծրագրի նկարագիրը
- Ծրագրի նպատակը
- Մասնագիտության ծրագրի կրթական վերջնարդյունքները/կոմպետենցիաները
- Ծրագրի կառուցվածքը՝ ըստ համապատասխան կրեդիտների
- Գնահատման մեթոդները
- Դասավանդման և ուսումնառության մեթոդները

2.1. Ուսումնական պլանի կառուցվածքը ներառում է.

1. Կրթամասերը (ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական)՝ ըստ հանրագումարային կրեդիտների և դասընթաց-մոդուլների քանակի
2. Ուսումնական ծրագրի կրթամասերում ներառված դասընթաց-մոդուլները՝ համապատասխան դասիչներով և հատկացված կրեդիտներով

3.1. Ուսումնական պլանը ներառում է.

Ըստ կիսամյակների ամրագրված դասընթացները՝ համապատասխան լսարանային ժամաքանակի բաշխվածությամբ և ստուգման ձևերով:

4.1. Յուրաքանչյուր դասընթաց (կրթական մոդուլ) ունի առարկայական նկարագիր: Առարկայական նկարագիրը ներառում է.

- Թողարկող ամբիոնը
- Առարկայի անվանումը և ընթացիկ մոդուլը
- Առարկայի դասիչը և մոդուլների քանակը
- Մասնագիտությունը
- Կուրսը/կիսամյակը
- Դասընթացի նպատակը
- Կրթական արդյունքները
- Դասընթացի կազմակերպման նկարագիրը
- Նախապայմանները
- Դասավանդման և ուսումնառության մեթոդները
- Դասընթացի համառոտ բովանդակությունը
- Գրականությունը (հիմնական, լրացուցիչ)
- Ստուգման և գնահատման ձևերը
- Գնահատման բաղադրիչները և կշիռը
- Գնահատման սանդղակը
- Այլ տեղեկություններ
-

6.2. ՄԿԾ-ի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիաների ներառում է.

- Յուրաքանչյուր առարկայի վերջնարդյունքում ուսանողի ձեռքբերած կոմպետենցիաները՝ ըստ TUNING մեթոդաբանության
- Ուսանողի ձեռք բերած ընդհանրական կոմպետենցիաները՝ ըստ գործիքային, միջանձնային և համակարգային բաղադրիչների
- Ուսանողի ձեռք բերած մասնագիտական կոմպետենցիաները՝ ըստ առարկայական և մանկավարժական բաղադրիչների

Առարկայական նկարագրի առանձին մաս է կազմում ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակի հաշվարկը, ըստ որի պայմանավորված է առարկային տրամադրված կրեդիտի չափը:

ԱՄԲԻՈՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 2021-2022 ուստարում

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	2021-2022
1	Ալեքսանյան Սամվել Մերգելի	կ.գ.դ., պրոֆեսոր	2
2	Ալեքսանյան Աննա Սամվելի	կ.գ.թ., դոցենտ	2
3	Գայանե Օքսուզյան	կ.գ.թ., դոցենտ	2
ԸՆԴԱՄԵՆԸ			6

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԴԱՍԱԽՈՍ ԱԱՀ	Գիտական աստիճան, կոչում
1	Թունաբանություն, ֆարմաիա	Մելքոնյան Լուսինե Հրայրի	Կ.գ.թ., դոցենտ
2	Օրգանական քիմիա, անօրգանական քիմիա, կոսմետոլոգիա	Խաչատրյան Արմենուհի Արմենի	Ք.գ.թ.
3	Անալիտիկ քիմիա, ֆիզիոլ. քիմիա	Ավագյան Կարինե Խանանի	Ք.գ.թ., դոցենտ
4	Դեղաբանություն, դեղերի արտադրության տեխնոլոգիա, դեղագիտության կառավարում և էկոնոմիկա	1.Պետրոսյան Լիլիթ Հրահատի	-
		2.Խուրշուդյան Ռուզաննա Ղազարի	-
5	Կենսաքիմիա, մոլեկուլային կենսաբանություն	Ալեքսանյան Աննա Սամվելի	Կ.գ.թ., դոցենտ
6	Կենսաբանության դասավանդման մեթոդիկա	1. Ադամյան Նելլի Վոլոդյայի	Կ.գ.թ., դոցենտ

		2. Գոլյան Գոհար Պերճի	-
7	Կենսաբազմազանություն /բուսաբանություն, կենդանաբանություն/	1. Գրիգորյան Անգին Ֆելիքսի	Կ.գ.թ., դոցենտ
		2. Խաչատրյան Անուշ Ստյոպայի	Կ.գ.թ., դոցենտ
8	Էկոլոգիա և բնապահպանություն	1. Պետրոսյան Կարինե Ռահիմի	Կ.գ.թ., դոցենտ
		2. Գրիգորյան Կարինե Աշիկի	Կ.գ.թ.
9	Մարդու կազմաբանություն, գենետիկա	Գրիգորյան Անահիտ Ֆարրիցուսկու	Կ.գ.թ., դոցենտ
10	Ֆիզիոլոգիա	Ալեքսանյան Սամվել Սերգեյի	Կ.գ.դ., պրոֆեսոր
11	Առողջապահական վիճակագրություն Կենսատեխնոլոգիա, իմունոլոգիա	Օքսուզյան Գայանե Ռաֆիկի	Կ.գ.թ., դոցենտ
12	Կենսատեխնոլոգիա	1. Հարությունյան Արայիկ Մանվելի	տեխ. գիտ թեկն.
		2. Մելիքյան Վասպուրական Շահենի	գյուղ. գիտ թեկն.

Մագիստրոսական թեզերի ղեկավարումն իրականացվում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական ներուժի շնորհիվ: Վերլուծությունները ցույց են տալիս, որ մագիստրոսական թեմաները հիմնականում համապատասխանում են դասախոսների գիտական ուսումնասիրման ոլորտին: Մակայն որոշ թեմաների ուղղությամբ համագործակցությունն այլ բուհերի կամ գիտահետազոտական ինստիտուտների հետ անհրաժեշտություն է: Ամբիոնն ունի նմանատիպ համագործակցություններ համապատասխան կազմակերպությունների հետ, սակայն ամրագրված չէ համագործակցության պայմանագրերով: Հետագայում ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով անհրաժեշտ է համագործակցության պայմանագրեր կնքել համապատասխան կազմակերպությունների հետ:

**2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» և «ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՑ
ՀԵՌԱՑՎԱԾ, ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ, ՏԱՐԵԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ**

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ	ԿՈՒՐՍ	2021-2022 Կենսաբանություն					2021-2022 Դեղագործական քիմիա				
		Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ գորակոչված	Հեռացված	Տեղափոխված	Վերականգնված	Տարեկետում ստացած	Բանակ գորակոչված
ԲԱԿԱԼԱՎՐ /ԱՌԿԱ/	I										
	II										
	III										
	IV										
ԸՆԴԱՄԵՆԸ											
ԲԱԿԱԼԱՎՐ /ՀԵՌԱԿԱ/	I										
	II						1				
	III						1				
	IV										
	V										
ԸՆԴԱՄԵՆԸ							2				
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	I	1									
	II										
ԸՆԴԱՄԵՆԸ		1									
ՀԵՏԱԶՈՏՈՂ											
ԸՆԴԱՄԵՆԸ		1					2				

* ՄՍՈՒՀ –ից բուհ ընդունված

** Թեզը չի պաշտպանել տվյալ տարում

Ուսումնառողների տարեցտարի նվազման պատճառներից մեկը հանդիսանում է բնագիտամաթեմատիկական հոսքի նկատմամբ դիմորդների նվազ հետաքրքրվածությունը, բնակչության արտագաղթը, դիմորդ-շրջանավարտների քանակի տարեցտարի նվազումը:

Ամբիոնը այս առումով շատ անելիքներ ունի: Առաջին հերթին անհրաժեշտ է դպրոցներում մասնագիտական կողմնորոշում սկսել ոչ թե ավագ, այլ հիմնական դպրոցից: Հիմնական դպրոցների հետ կնքելով համագործակցության պայմանագրեր՝ ամբիոնի դասախոսների կողմից անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր ամբիոնի մասնագիտությունների գծով հետաքրքրվածության բարձրացման և լրացուցիչ գիտելիքներ ստանալու ուղղությամբ: Որոշակի թեմաներով դպրոցներում դասախոսների կողմից անցկացնել դասախոսություններ՝ «Դեղագործական քիմիա» և «Կենսաբանություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների օգնությամբ կազմակերպել հետաքրքրաշարժ միջոցառումներ, վիկտորինաներ և այլ: Ավագ դպրոցների աշակերտների համար շարունակել լրացուցիչ պարապմունքները ընդունելության մուտքի հաղթահարման նպատակով: Հիմնական խնդիր է հանդիսանում Շիրակի մարզի համայնքների դպրոցների շրջանավարտների ներգրավվածությունը կազմակերպվող պարապմունքներին: Բուհի ղեկավարությանը առաջարկվում է ստեղծել բնագիտամաթեմատիկական հոսքով մասնագիտացված դպրոց՝ ապահովելով նաև հեռավոր գյուղերի աշակերտների կացությունը:

Աշխատաշուկայում շրջանավարտին ավելի լայն հնարավորություն ստեղծելու նպատակով իրականացնել լրացուցիչ դասընթացներ՝ շնորհելով քիմիա մասնագիտությամբ մանկավարժի լրացուցիչ որակավորում, «Քիմիա» բաժինն ավարտող ուսանողին՝ շնորհելով կենսաբանություն մասնագիտությամբ մանկավարժի լրացուցիչ որակավորում: «Դեղագործական քիմիա» բաժինն ավարտած ուսանողներին շնորհել պրովիզորի որակավորում, որը հնարավորություն կտա ուսանողին առանց արգելքի աշխատել դեղատներում, իսկ «Կենսաբանություն» բաժինն ավարտողին՝ շնորհել քիմիա մասնագիտությամբ մանկավարժի լրացուցիչ որակավորում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործունեությունը 2021-2022 ուստարում միտված է եղել ուսումնական ու գիտական աշխատանքների իրականացմանը: Հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության իրականացումը՝ պայմանավորված համավարակի տարածմամբ, հիմնականում կազմակերպվել է առցանց: Վերջինս իր հերթին հանգեցրեց ուսումնական գործընթացի կազմակերպման որոշ բարդությունների, որոնք հաղթահարվեցին ուսումնամեթոդական գործընթացի կառավարման, գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնների ղեկավարների և աշխատակիցների գործուն աջակցությամբ: Բուհի աշխատակիցների և ուսանողների համար կազմակերպվել են հեռավար ուսուցման գործիքակազմին տիրապետելու հմտությունների ձևավորմանը նպաստող դասընթացներ:

Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ բաշխվածությունը.

- ✓ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն – մինչև 35 տ.՝ աշխատակիցների 20%, 35-64՝ 58%, 65 և ավելի՝ 22%
- ✓ Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն - մինչև 35 տ.՝ աշխատակիցների 3%, 35-64՝ 74%, 65 և ավելի՝ 23%
- ✓ Գործարարության և վարչարարության ամբիոն - մինչև 35 տ.՝ աշխատակիցների 19%, 35-64՝ 56%, 65 և ավելի՝ 25%

Ըստ ներկայացված տվյալների, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնն անելիքներ ունի մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողներին ներգրավելու ասպիրանտական/հայցորդական ծրագրերում:

Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ գիտական աստիճանի և կոչման գերազանցում է 65%-ը: Առանց գիտական աստիճանի և կոչման պատկերն հետևյալն է.

- ✓ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն – աշխատակիցների 39%
- ✓ Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն - աշխատակիցների 19%

- ✓ Գործարարության և վարչարարության ամբիոն - աշխատակիցների 50%

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի այս ցուցանիշը պայմանավորված է ՏՏ ոլորտի աշխատակիցներով, ովքեր հիմնականում չունեն գիտական աստիճան և կոչում: Գործարարության և վարչարարության ամբիոնը տարեցտարի բարելավում է այս ցուցանիշը՝ աշխատակիցներին ներկայացնելով դոցենտի կոչման, ինչպես նաև աշխատանքներ են տարվում գիտական ատենախոսությունների կատարման ուղղությամբ:

Ամբիոնները պարբերաբար վերանայում են մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) կառուցվածքային բաղադրիչները, մասնավորապես ուսումնական պլաններում կատարելով համապատասխան փոփոխություններ՝ պայմանավորված աշխատաշուկայի պահանջներով:

Ըստ բուհում գործող «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմեր»-ի սահմանվում է յուրաքանչյուր դասախոսին տրամադրվող մագիստրոսական թեզի, ավարտական աշխատանքի, կուրսային աշխատանքի, պրակտիկաների ղեկավարման առավելագույն քանակը, որի հիման վրա իրականացվում է դասաբաշխումը: Մակայն կարգը լրամշակման կարիք ունի, որտեղ անհրաժեշտ է հստակեցնել պրոֆեսորադասախոսական կազմի լսարանային և արտալսարանային ծանրաբեռնվածության նվազագույն և առավելագույն շեմերը, քանի որ որոշ դեպքերում դասախոսը գերծանրաբեռնված կամ թերծանրաբեռնված է լսարանային ժամերով:

Գիտահետազոտական աշխատանքների մասով ամբիոնների աշխատակիցների ցուցանիշներն հետևյալն է.

- ✓ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն – 15 աշխատակիցների կողմից տպագրվել է 90 աշխատանք

- ✓ Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն - 13 աշխատակիցների կողմից տպագրվել է 24 աշխատանք

Ուսումնառողների թվաքանակի տարեցտարի նվազման պատճառով ֆակուլտետի որոշ մասնագիտությունների հայտագրումը վտանգված է: Պատճառներից մեկը հանդիսանում է բնագիտամաթեմատիկական հոսքի նկատմամբ

դիմորդների նվազ հետաքրքրվածությունը, բնակչության արտագաղթը, դիմորդ-շրջանավարտների քանակի տարեցտարի նվազումը:

Ամբիոններն այս առումով շատ անելիքներ ունեն: Առաջին հերթին անհրաժեշտ է դպրոցներում մասնագիտական կողմնորոշում սկսել ոչ թե ավագ, այլ հիմնական դպրոցից: Հիմնական դպրոցների հետ կնքելով համագործակցության պայմանագրեր՝ ամբիոնի դասախոսների կողմից անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր ամբիոնի մասնագիտությունների գծով հետաքրքրվածության բարձրացման և լրացուցիչ գիտելիքներ ստանալու ուղղությամբ: Որոշակի թեմաներով դպրոցներում դասախոսների կողմից անցկացնել դասախոսություններ, կազմակերպել հետաքրքրաշարժ միջոցառումներ, վիկտորինաներ և այլն: Ավագ դպրոցների աշակերտների համար շարունակել լրացուցիչ պարապմունքները ընդունելության մուտքի հաղթահարման նպատակով: Հիմնական խնդիր է հանդիսանում Շիրակի մարզի համայնքների դպրոցների աշակերտների ներգրավվածությունը կազմակերպվող պարապմունքներին: Աշխատաշուկայում շրջանավարտին ավելի լայն հնարավորություն ստեղծելու նպատակով իրականացնել լրացուցիչ դասընթացներ՝ շնորհելով վկայականներ, յուրաքանչյուր մասնագիտության համար կազմել ուսանողի ուղեցույց և այլն: